ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հոդված 12. Մշտական հանձնաժողովի լիազորությունները

1. Մշտական հանձնաժողովն իր իրավասության շրջանակում՝
1) իրականացնում է գլխադասային հանձնաժողովի լիազորությունները.
2) իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն.
3) պաշտոններում ընտրության կամ նշանակման համար Ազգային ժողովին առաջարկում է թեկնածուներ.
4) կարող է հարցումներով դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց.
5) կարող է հրավիրել խորհրդարանական լսումներ.
6) կարող է ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր.
7) քննարկում է Ազգային ժողովին ուղղված հանրագրերը և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին ներկայացնում համապատասխան եզրակացություններ:

Deleted: :

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են երեքշաբաթյա ժամկետում քննարկել հանձնաժողովի գրավոր հարցումը և գրավոր պատասխանել նրան:
3. Մշտական հանձնաժողովը կարող է իր իրավասությանը վերապահված հարցերի նախնական քննարկման և դրա արդյունքները հանձնաժողով ներկայացնելու նպատակով իր որոշմամբ, Աշխատակարգով սահմանված կարգով ստեղծել ենթահանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր: Ենթահանձնաժողովը կամ աշխատանքային խումբը կարող է լուծարվել հանձնաժողովի որոշմամբ:
4. Մշտական հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը, Խորհրդի սահմանած օրինակելի աշխատակարգին համապատասխան, հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:
5. Մշտական հանձնաժողովի լիազորություններն ավարտվում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում:

Հոդված 13. Մշտական հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը

1. Մշտական հանձնաժողովի նախագահը՝
1) նախապատրաստում և նախագահում է հանձնաժողովի նիստերը.
2) գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստ.
3) մասնակցում է Խորհրդի նիստերին.
4) ղեկավարում է հանձնաժողովի քարտուղարությունը.
5) համակարգում է ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի աշխատանքը.
6) համակարգում է Ազգային ժողովի մարմինների և Աշխատակազմի հետ հանձնաժողովի, ինչպես նաև հանձնաժողովի քարտուղարության գործունեությունը.
7) հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը.
8) ընթացք է տալիս և պատասխանում հանձնաժողովին ուղղված գրություններին.
9) կարող է հանձնաժողովի իրավասությանը վերապահված նախագծի վերաբերյալ կարծիքներ ստանալու նպատակով այն ուղարկել գիտական, ուսումնական հաստատություններ, ինչպես նաև հանձնաժողովի նիստերին հրավիրել մասնագետներ.

10) հանձնաժողովին իրազեկում է նրա որոշումների կատարման ընթացքի մասին.

11) Աշխատակարգով սահմանված կարգով հաշվառում է հանձնաժողովի նիստերից և հրավիրած խորհրդարանական լսումներից հանձնաժողովի անդամների բացակայությունները.

12) Ազգային ժողովին ուղղված հանրագրերի քննարկման նպատակով նշանակում է զեկուցողներ:

2. Մշտական հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնը թափուր լինելու դեպքում նրան փոխարինում է տեղակալը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի կողմից որոշված անդամը:

Deleted: :

ԳԼՈՒԽ 8.1. ԱՆՀԱՏԱԿԱՆ և ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳՐԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հոդված 31.1.Հանրագրերի ներկայացումը և քննարկումը

1. Հանրագրերի ներկայացումն ու քննարկումն Ազգային ժողովում իրականացվում է Կանոնակարգով և «Անհատական և կոլեկտիվ հանրագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Ազգային ժողովին հանրագրեր ներկայացվում են Ազգային ժողովի լիազորություններին վերաբերող հարցերով:

3. Ազգային ժողովին ուղղված հանրագրերը ներկայացվում են գրավոր ձևով: Հանրագրերը գրանցում է Աշխատակազմը: Աշխատակազմը որոշում է հանրագիրը վերահասցեագրելու, ինչպես նաև հանրագրի քննարկումը մերժելու հետ կապված հարցերը: Հանրագիրը վերադարձնելու, վերահասցեագրելու կամ քննարկումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում Աշխատակազմը երկօրյա ժամկետում հանրագիրն ուղարկում է այն մշտական հանձնաժողովին, որի իրավասություններին վերաբերում է հանրագիրը:

4. Եթե հանրագիրը վերաբերում է մի քանի մշտական հանձնաժողովների իրավասություններին, ապա Աշխատակազմը հանրագիրը միաժամանակ ուղարկում է այդ մշտական հանձնաժողովներին:

5. Ազգային ժողովին ներկայացված հանրագրերը քննարկվում են մշտական հանձնաժողովի նիստում:

6. Մշտական հանձնաժողովի նախագահը նիստում հանրագիրը ներկայացնելու նպատակով նշանակում է երկու զեկուցող, որոնցից մեկը պետք է լինի կառավարող, իսկ մյուսը՝ ընդդիմադիր խմբակցության անդամ:

7. Հանրագիրը մշտական հանձնաժողովի նիստում քննարկվում և դրա վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություն է ներկայացվում հանրագիրը ստանալուց հետո

երեսնօրյա ժամկետում: Հանրագրի քննարկման ժամկետը մշտական հանձնաժողովի որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև մեկ ամսով՝ այդ մասին ծանուցելով հանրագիրը ներկայացրած անձին սույն մասով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 3 աշխատանքային օր առաջ:

8. Մշտական հանձնաժողովը հանրագրի քննարկման արդյունքում եզրակացություն է ներկայացնում հանրագիրը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ: Մշտական հանձնաժողովի նիստում հանրագիրը քննարկվում և դրա վերաբերյալ եզրակացությունն ընդունվում է Կանոնակարգով նախատեսված ընդհանուր կարգով: Հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս կառավարող խմբակցության ներկայացուցիչը, իսկ հարակից զեկուցմամբ՝ ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը:

9. Հանրագրի վերաբերյալ մշտական հանձնաժողովի եզրակացությունը պետք է պարունակի հանրագրի բավարարման կամ մերժման հիմքերի վերաբերյալ հակիրճ հիմնավորում:

10. Մշտական հանձնաժողովի եզրակացությունը Աշխատակազմը հնգօրյա ժամկետում ուղարկում է հանրագիր ներկայացրած անձին, ինչպես նաև Ազգային ժողովի խմբակցություններին , որոնք հանրագիրը և դրա քննարկման արդյունքները կարող են օգտագործել իրենց օրենսդրական նախաձեռնություններում:

Հոդված 31.2.Հանրագրի քննարկումը Ազգային ժողովի նիստում

1. Յուրաքանչյուր տարվա վերջում յուրաքանչյուր մշտական հանձնաժողովին ներկայացված հանրագրերը քննարկվում են Ազգային ժողովի հերթական նստաշրջանի նիստերում հետևյալ կարգով՝

1) հիմնական զեկուցմամբ հանդես է գալիս իրավասու հանձնաժողովի նախագահը՝ ներկայացնելով տվյալ տարվա ընթացքում հանձնաժողովին ներկայացված հանրագրերի վերաբերյալ հանձնաժողովի ընդունած եզրակացությունները, որից հետո նրան կարող են հարցեր տրվել,

2) հարակից զեկուցում չի լինում,

3) մտքերի փոխանակություն,

4) եզրափակիչ եյությով հանդես է գալիս իրավասու հանձնաժողովի նախագահը:

2. Հանրագրի քննարկումն Ազգային ժողովի նիստում ավարտվում է առանց որևէ փաստաթղթի ընդունման: